



## ՕՐԱԳԻՐ ԶՄԻՌՈՆԻԱՅ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱՐԻ ՏԱՐԻ

ԶՄԻՌՈՆԻԱ ՈՒՐԲԱԹ 8 ՅՈՒՆԻԱՐԻ 1860

ԹԻԻ 614

ԶՄԻՌՈՆԻԱ • 8 ՅՈՒՆԻԱՐԻ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Լուրացայի քաղաքական գործքերը մինչոյն վերջին մէջ կը գտնուին և կենցաղագէտ անձանց, նմանապէս բոլոր հասարակութեան ուշադրութիւնը մասնաւորապէս դարձեալ տետրակի մը վրայ, որ մօտ օրերս հրատարակուեցաւ Փարիզի մէջ և որուն վերնագիրն է «Վապը և Տէրութեան ժողովը»։ Այս տետրակին մէջ թէպէտ և հեղինակին անունը գրուած չէ, բայց ընդհանրապէս կը հաստատեն թէ մօտեւոր 1 անգամ ընդհանրապէս և կենցաղագէտ հոգեւոր անձին գործըն է, որ Փարիզի Բանկի-Բանկի օրագրութեան գլխաւոր խմբագիրն է և մտերիմ յարաբերութիւններ ունի, կրտսէն, Վարդէոն կոչուող հետ։

Յիշեալ տետրակին հեղինակը՝ մաքուր հոգեւոր մէջաւանի մը ոգով, անկեղծութեամբ կը քննէ Վապըն աշխարհական և հոգեւոր իշխանութիւնը և անժխտի փաստերով կը հաստատէ թէ անհնար է որ Հռոմի պապը քահանայապետ և միանգամայն թագաւոր ըլլայ։ Ահա՛ որ է, որ պապը իբրեւ քահանայապետ՝ մէկ ձեռքը վերցնէ խաչակրէրէ և օրհնելու համար, և միւս ձեռքով՝ սուրբ քաշէ մահ սպառնալու համար։ Վապը՝ որ կը քննադատէ հերձուածողները և հերետիկոսները, ինչպէս կարելի է, կրտսէ յիշեալ տետրակը, որ թոյլ տայ որպէսզի կրօնի և խղճմանաց ազատութիւնը տիրէ իւր վիճակացը մէջ և ուր որ այս ազատութիւնը չկայ, այն երկրին կառավարութիւնը պէտք է որ բռնութեամբ զրկուի իր իրաւունքէն և այլն և այլն։

Այս ամեն պարագաները, և ուրիշ ասոնց նը ման շատ օրինակ որ պատճառներ յառաջ բերելէ ետեւ, յիշեալ տետրակին հեղինակն և բարեպաշտ հեղինակը, ցանկալով որ պապին աշխարհական իշխանութիւնը բոլորովին չկորսուի, զոր

հարկաւոր կը համարի անոր հոգեւոր իշխանութեան գործադրութեանը համար, բայց միանգամայն ազէկ գիտնալով թէ աշխարհական մեծ և հզօր իշխանութիւն մը չկայ անոր համաձայնիլ քահանայապետական հոգեւոր իշխանութեանը հետ և վտանգի մէջ կը ձգէ կրօնը, կառավարիչ քրիստոնէական լղբացմամբ, որպէսզի պապին իշխանութիւնը սեղմուի և ամբողջութիւնը միայն Հռոմի մէջ, որ պապը ոչ թէ իբրեւ թագաւոր, այլ իբրեւ հայր հասարակոյց տիրէ իւր ժողովրդեան վրայ, առանց ղեկավարական գեղեքու, առանց լրտեսներու և առանց ուրիշ որ և իցէ միջոցներու, որ սուրբ Աւետարանին քարոզած սկզբանցը և վարդապետութեանցը հակառակ են։

Տետրակին այս եզրակացութիւնը թէպէտ և սիրով և հաճութեամբ ընդունուեցաւ լուսաւորեալ հոռմէականներէն, բայց եկեղեցականաց մեծագոյն մասը և նախապաշարեալ ամեն հոռմէագէտները զանազան կերպիւ յայտնեցին իրենց սաստիկ դժգոհութիւնը և իրենց սրտին բարկութիւնը։ Ինչպէ՛ր անուն կրօնական օրագիրը յատկապէս յանդիմանեցաւ Քաղաքի կառավարութեան, ի պատճառս գրգռական յօդուածոց, զորս հրատարակեց իւր թերթէն ուն մէջ ի մասին այս խնդրոյն։

Արձուի թէ պապին նախակը, որ ի Փարիզ այս տետրակը կարդալէն ետեւ, ինչոյն արտաքին դժոյճ պաշտօնէին քով գացեր է իմանալու համար թէ արդեօք կառավարութեան գիտութեամբը հրատարակուած է այն։ Բայց արտաքին գործոց վերատեսչէն որոշ պատասխան մը չընդունելով չէ կրցեր իւր երկրայութիւնը փառատել։ Վապըն հասարակութիւնը ըստ մեծի մասին համոզեալ է թէ Վապըն (Երրորդին) հաճութեամբ գրուած և հրատարակուած է այս տետրակը։ ապա թէ ոչ մինչեւ ցոյցօր (17) ինչեօք օրագրոյն մէջ պէտք էր որ պաշտօնական

կերպիւ հերքուէր յիշեալ տետրակին առաջարկած քաղաքականութիւնը, կամ անոր փաճառումը արդիւնէր Փարիզի մէջ։ ուր 7-8 օրուան մէջ 60 հազար օրինակէն աւելի փաճառեցաւ։

Աւելորդ կը համարուի զրուցելու թէ իտալիոյ և Վենիսի Երիտանիոյ օրագրութիւնները, որքան թէ ամենքն ալ, սիրով ընդունեցան «Վապը և Տէրութեան ժողովը» անունեալ տետրակը և իրենց կատարեալ հաճութիւնը կը յայտնեն անոր մէջ պարունակեալ քաղաքական սկզբանցը ի մասին հոռմէական խնդրոյն։

Տէրութեան ժողովոյն գումարուելոյն օրը անորոշ կերպիւ յայտարարուեցաւ։ ուստի յայտնի չէ այժմ թէ երբ պիտի գումարուի։ Վապըն աշխարհական կերպիւ յայտնի չէ տակաւին թէ արդեօք պիտի ըլլան լիազօր գեապաններ որ ներկայ պիտի գտնուին այս ժողովոյն մէջ ի կողմէն և Լուրացայի մեծ տերութեանց։ Վապըն (17) տերութիւնը չուզելով յաղարկել իւր արտաքին գործոց տեսուչը, ուրիշ մեծ տերութիւններէն ևս, որ ի սկզբան որոշած էին իրենց արտաքին գործոց պաշտօնեաները յաղարկել, այժմ միտք ունին, կրտսէն, ուրիշ տերութիւններ ընել ըստ այսմ մասին։

Վաղղիոյ արտաքին գործոց տեսուչ Վալէվաքի կոմսը իւր պաշտօնէն հրաժարելով, Վարդէոն կայսրը այս բարձր պաշտօնը յանձնեց մասիւ թուովնէին, որ ինչպէս յայտնի է, Վաղղիոյ գեապան էր ի Վոստանդուպոլսոյ։

Վենիսի (17) Տէրութեան օրագրոյն մէջ հետեւեալ յօդուածը կը տպագրուի։

«Իստ ամենայն երեւմանց, տերութեանց ժողովոյն որոշումը հակառակ պիտի չըլլայ գաղափարացը, որ հրատարակուած են «Վապը և Տէրութեան ժողովը» անունեալ տետրակին մէջ։ Վապըն տարակոյն չկայ, թէ այս քաղաքական

## ՔԱՂԱՔԱՐԱԿԱՆ

ԶԻՔ ԱՍՏ ՕՐ ԱՆԵՐԵՒ

Ընթերցող, Կրտսէ, իմաստասէրը Հիւնն, Յիշ մեզ պատկեր յողողող կենաց մարդկեղէն, Օր ծերունին Վարմանիդեայ աշակերտ կանգնեաց յիշեալ ի տաճարին հրաշակերտ։

Տախտակ ի հնումն դարբ աշխարհի կանգնեցին, ճարտարարուեստ զոր գրուածքաւ էր վրձին, խորհրդաւոր ձեռն նուիրաց ի մեհեան Սատու ունական բագնին մեծի յանդիման։ Վապըն վեհ և հրաշագիծ այս պատկեր, որ ըզրպատիր կենաց մարդկան տիպ բերէր։ Ընդ սիամս մըտից գիւրեղմական կենցաղոյն կին հրաշագեղ բազմեալ փառաց ի գահայս։ Բաժակ ոսկի շուշանափայլի ի ձեռնին, Սատուական օրաց առ իւր գեղեքին։ Անդ, քանիք արբին գիւրջին հըրապոյր, Եւ ըզմըրուր ըն քամեցն մահաբոյր։ Սի յայն վատահարքուն հասակդ գեղազէշ, Օր մի կափու ըն գըլըրիցիս դահապէժ։

Յընթերցողայս գուհու կրնոջն մեղմեխ Գունտ վիմակուռ գըրի ի հիւս միշտ յեղիւղ, Յոր անիրաւ նստեալ ծեր սմն աշտցու Բոտ խաւ կամաց դատէ զերուսնդ մահացու։ Ամեն առիւ շաղկաւ բաշխոյս բազմաբիւր Վրձմ ըզմիշտ, կը լին քանի խեղճութիւր։ Կիսոց պատիւս, գանձս և որդիս գեղապար Տայ և յայոց բառնայ ըզմիշտ խեղճար։

Ընդ մահացուաց խոնեալ ի հոյլ բազմութիւն, խառնակ հնամայնի ծաւալի խղճըրտին։ Ամն ըզմահման գառն անիծից ի գըլըին Նորին կապեալ տեղայ ըւտանս յորդաբուին։ Ընդ ամն օրհնէ ըզնա իբրու զբարեկամ, Ընդ սին պարզ և սն գիրկըս արկեալ յարաժամ։

Ընդ մահացուաց, ընդ էր այդպէս հիգաբար կայք խաղալի բաղդին ի ձեռս վայրապար, Սուտ է աշխարհ, սուտ է պերճանք կրտսեան, Ձիք ինչ կայսն, մարմինը հողոյ կոն մընան։ Որ յաշտուածք և մի արկածը չարապէս, Որք ի յողորդ կենցաղոյ միշտ գան հանդէպ, Ետակցէն ըստնանել մեզ մի երբէք։ Որիչ ևս ասել, աւատիկ օրն աներեկ։

Զմիւռնիս, 1 Յունիարի 1860.

Ա. Ս. Յ. Պ.

## ԵՄԵՆԱԿԱՆ ԶՄԻՐՈՆ

ՔԻՉ ՍՏԱԿՈՎ ԱՍՏ ԲԱՆ ԱՆԵՐԵՒ

Անեղիւն շաղկաւ մի, ներկայ ի Հալէպ։

(Հարունաւորութիւն։ 1)

Չեզ երեք այդ կրտսեանք, եւ ի պոյնտիդ տասը զէն փարայ թող տայ, որ բան մի ըսել չէ, անկէ ետեւ ալ չարաթը քառսուն փարայ թող տայ, որ բան մի ըսել չէ, այսինքն ամեն շաբաթ օրը, որ համագումարը մէկ տարին վաթսուն երկու զէն ընելէ, մենք ան փարան շատ էմիլեթի տեղեր, քեզն հինգ զուռու չե ֆայիղը կուտանք։

Անհոյ քաղաքայ շաղկաւ մի։

գուք ալ կինէ ամեն շաբաթ օրը քառսուն փալ բան տուէք, երկու տարին հարիւր քառսուն և մէկ, երեք տարին հարիւր սէքսէնը եօթը, չորս տարին երկու հարիւր վաթսուն և մէկ, հինգ տարին երեք հարիւր քառսուն և չորս, վեց տարին չորս հարիւր քառսունը եօթը, եօթը տարին հինգ հարիւր քառսուն և մէկ, ութ տարին վեց հարիւր յիսուն և ութ, ինը տարին եօթը հարիւր սէքսէն և ութ, տասը տարին ինը հարիւր եօթսուն և չորս կընէ։ Տասը տարին ըմնցածին պէս, վաթսուն և վեց զուռու ալ կուտան։ Կըլլայ հազար զուռու, թէ օր ձեզի պէս հարիւր մարդ տղայ կնիկ աղջիկ գտնուի, ասանկ յառաջ տարը զուռու, ետեւ տարը ի շարունակ ամեն շաբաթ օրը քառսուն փալ բայ, ու տասը տարին ըմնեալուն վաթսուն և վեց զուռու տուող նէ, իշտէ եղաւ հարիւր հազար զուռու, Հիւ չեւիհէ մի ընէր հարիւր ալ կը գտնուի, աւելի ալ։

Իբրեւ պոյնտիդ եօթը կէս զուռու փարայ թող տայ որ բան մի ըսել չէ, անկէ ետեւ ալ շաբաթը, եանի ամեն շաբաթ օրը քառսուն փարայ թող տայ, մէկ տարին եօթսուն երեքսուն կընէ, ան ալ կինէ ֆայիղը կուտանք, գուք ալ կինէ շարունակ ամեն շաբաթ օրը քառսուն փարայ տուէք, երկու տարին վաթսուն երեքսուն, երեք տարին չորս և վեցսուն, չորս տարին հարիւր եօթսուն և չորս, հինգ տարին հարիւր եօթսունը վեց, վեց տարին երկու հարիւր քառսունը, եօթը տարին երկու հարիւր եօթսուն և վեց, ութ տարին երկու հարիւր եօթսուն և հինգ, ինը տարին երկու հարիւր եօթսուն և չորս, տասը տարին երկու հարիւր եօթսուն և հինգ։



Գաղափարաց առաջարկութիւնը Գաղղիոյ հաս-  
նութիւնը ստանալէ ետեւ, պաշտպանութիւն  
պիտի գտնէ հասնական չեղող կառավարութի-  
ւեան, որպիսի են Նիգղիան, Սուսիան, Բրու-  
սիան և Շուշուր : Անոնք տեւաբար մէջ մի-  
այն լատինական միտաբան է, որ պիտի պաշտպանէ  
սուրբ-Միջոց իրաւունքները : Երկրորդ կար-  
գի տեւաբար մէջ, Սարտեմիան՝ անտարա-  
կոյն Գաղղիոյ քաղաքականութեանը պիտի հե-  
տեւի : Սարտեմիան ևս գուցէ միւսնոյն ընթացքը  
պիտի ունենայ : Նորոգի թափառութիւնը  
անշուշտ լատինացի հետ պիտի ըլլայ, և հաւա-  
նականաբար Սորդուկայի կառավարութիւնն ալ  
անոր պիտի հետեւի :

«Ամեն կարեւորութիւնները մտածելով, անհա-  
ւատալի չեմք որ Գաղղիոյ կառավարու-  
թիւնը իւր որոշումը յայտնէ ի նպատակ առա-  
ջարկութեանը, որ յիշեալ տետրակին մէջ եղած  
է : Եւ այս բանին վրայօր մեր ունեցած միակ-  
երկրայութիւնը կրճաքի ի բարեկամական և ի  
մտերմ իսկ յարաբերութեանց, որով այսօր-  
ուան օրս միաւորեալ են Գիւլիսի և Վեննայի  
գահիւնները : Վասնզի լատինացի քաղաքակա-  
նութիւնը յիշեալ տետրակին հեղինակին գաղա-  
փարներէն շատ հեռու է, թէ կրօնական պատճա-  
ռաց համար և թէ ի պատճառս իւր կացութեան  
և իւր քաղաքական ապագային խաղի մէջ» :

Փարիզէն հետեւեալ տեղեկութիւնները կուտան :

«Պայքը և տեւաբար ժողովը՝ կոչուած  
տետրակի, որ քանի մը օրուան մէջ հաշակաւոր  
եղաւ, խորին տարաւորութիւն և ճշմարիտ ահ-  
մը պատճառեց բոլոր ջերմեանդ պապականաց  
վրայ : Կարելի չէ տարակուսիլ այսուհետեւ, թէ  
այս գրուածը Գաղղիոյ կառավարութեան գիտա-  
ւորութիւնը կը յայտնէ ի մասին Ռոմանիայի  
խնդրոյն, որ խաղաղութիւն գործող ամենէն գիտա-  
ւորութիւնն է : Այս քաղաքական յայտարարութեանը  
մէջ, այսինքն յիշեալ տետրակին մէջ նշանակ-  
ուած յատակադիրքը, որ դարուս պատմութեանը  
մէջ ընդարձակ տեղ մը պիտի բռնէ, տարակոյս  
չկայ թէ Նաբոլէոն Երրորդին յատակադիրքն է,  
զոր պիտի առաջարկէ տեւաբարութեանց գետնա-  
ժողովոյն և պիտի աշխատի, որպէսզի բոլոր Եւ-  
րոպան ընդունի զայն :

«Յիշեալ տետրակին դէմ, գերապատիւ մօտիւ  
Տիւրքիոյ Օրդէնի եպիսկոպոսը պատասխան  
մը գրեց, որ լի է կրեք և սպառնալից խորե-  
րով, և յայտնի կերպիւ պատերազմ կը հրատա-  
րակէ Նաբոլէոնեան կառավարութեանը դէմ» :

տարին, չորս հարիւր մէկ, տասը տարին, չորս  
հարիւր էեթմիշ և հինգ : Այնքա տարին ը-  
մնացածին պէսքսան և հինգ զուգուշալ կուտան  
կու ըլլայ հինգ հարիւր զուգուշ : Թէոր քեզի  
պէս երկու հարիւր մարդ, տղայ, կնիկ, աղջիկ  
զոնուի : ասոնք յառաջ եօթը կէս զուշ, ետեւ  
տասը տարի ամեն շաբաթ օրը քսան փարայ, ու  
տարին ըմննալուն քսանըհինգ զուգուշ տուող  
նէ, իշտէ եղաւ հարիւր հազար զուգուշալ աս :

Ասոր ալ չիւփհէ մի ընէր աւելի կը գտնուի :  
Իւջիւնձի պոյեթիիդ հինգ զուգուշ փարայ թող  
տոյ օր աս հիւ բան մի ըտէլ չէ անկէ ետեւ ալ  
եանի ամեն շաբաթ օր տասը փարայ թող տայ,  
մէկ տարին տասնեութ զուգուշ կընէ : աս ալ  
ֆայիղը տարովու դուք ալ կինէ շաբաթը տաս-  
նական փարայ տարովիդ, երկու տարին ետուուն  
երեք զուգուշ կընէ : երեք տարին յիսուն, չորս  
տարին վաթսուուն և ինը, հինգ տարին դոգսան,  
վեց տարին հարիւր տասնչորս, եօթը տարին  
հարիւր քառասուն և մէկ, ութ տարին հարիւր  
էեթմիշ և մէկ, ինը տարին երկու հարիւր չորս  
տասը տարին երկու հարիւր քառասուն և մէկ :  
Եւս տասը տարին ըրացածին պէս ինը զուգուշ  
ալ կուտան, կու ըլլայ երկու հարիւր յիսուն  
զուգուշ : Թէոր քեզի պէս երեք հարիւր մարդ,  
տղայ, կնիկ, աղջիկ գտնուի, ասոնք յառաջ հինգ  
զուգուշ, ետեւ տասը տարի ամեն շաբաթ օրը  
տասնական փարայ, ու տարին ըմննալուն ինը  
զուգուշ տուող նէ, իշտէ աս ալ եղաւ էեթմիշ  
և հինգ հազար զուգուշ : Հէլէ ասոր հիւ չիւփհէ  
մի ընէր, չիւնքի տիւնձի նաւրանտ օղի Յա-

ինչպէս կրտսնուի այս հոգեւոր հովիւն պատաս-  
խանայ զերջին խօսքերէն, որ հետեւեալներն են :

«Հիւս պայտիսի վիճակի մը մէջ կու գէթ ձգել  
զպապը : ուրեմն ինչո՞ւ համար ի սկզբան և ա-  
ռանց զանազան ձևեր դարձած եւ չի դուրս  
ցիլք : Իարեապագայութեամբ ձեր ուզածը պիտի  
չըլլայ : Այ, Գաղղիան պիտի չուգէ այս բանը :  
այն, պիտի չուգէ որ զրուցուի իրեն համար թէ  
այսպիսի վախճան մը ձեռք բերելու համար էր,  
որ մեծ պատերազմի մը պատահարաց և փորձա-  
նաց ներքեւ մտաւ, որ չորս յաղթութիւն ըրաւ,  
50 հազար զօրք կարսնցուց, 300 միլիոն ֆրանք  
ծախք ըրաւ և բոլոր լատինացի զորքեց : Այս  
բանը բաւական է, յետ այսօրիկ ձեր նպատակը  
յայտնուեցաւ, որ անշուշտ արժանի է ձեր  
սկզբանց շարութեանը և ձեր միջոցներուն անի-  
րաւութեանը : Սիով հարուածով կործանել  
քահանայապետական իշխանութիւնը, ասիկա  
գաղաւթութիւն մը պիտի ըլլայ, զոր մարդիկ սով-  
րած չեն տեսնելու : Վերջընէլ զպապը Հռո-  
մէն, այս բանին կարելի չէ նորէն ձեռք դար-  
նել : ... Սիկա միւսնոյն քաղաքական ընթացքն  
է, որ ի գործ կը դրուէր 1809ին, միայն այս  
տարբերութեամբ որ 1809ին բաւութեամբ կը  
հանէին զպապը Հռոմէն, բայց այս տետրակը  
կառաջարկէ խղճել զնա Հռոմի մէջ : Հիտակը  
զարմանալի կերպիւ կըմեկնէր լատինական խօս-  
քը որ կրէ «Իւ ես վեմ և ի վերայ այդ վիմի  
չինեցից զեկեղեցի իմ» : Բայց զգոյշ լըրաք,  
քանզի զրուցուած է այս վիմին համար թէ, ով  
որ անոր կըզարնուի, իսկոյն կըխորտակուի : Կար-  
ծէք թէ Պապը յաղթուած է, վասնզի երեք ա-  
միսէ ի վեր իւր նահանգները անոր գէմ պալա-  
տաքնուցին : Չոր մտածութիւնները կարճ են,  
և ներեցէք որ զրուցեմ, ձեր նախահայեաց  
զգուշութիւններն ալ բիրտ և տմարդի են :  
Անհոգ եղեք, այնչափ շուտով անձնատուր չեմք  
ըլլար, պապերը շատ բաներ տեսեր են, այսու-  
ամենայնիւ տակաւին կանգուն կըմնան : ...  
Սիով կարծէք թէ քրիստոնէական արեւնը մեր  
երակացը մէջ չըջան շաւուր, և թէ մեր սիր-  
տերը ալ չեն բաղկեր մեր կուրծքերուն մէջ :  
Օգոյշ լըրաք, քանզի վերջապէս պիտի վերա-  
ւորուիք : Չեմ գիտեր թէ արդեօք հարկաւո-  
րութիւն ունենիք արթննալու, բայց ձեր ըն-  
թացքով սքանչելի կերպիւ կը յաջողեք մեր  
աչքերը բանալու :

«Այս քանի մը տողերը բաւական են բացա-  
յայտ կերպիւ ցուցնելու Գաղղիոյ այժմեան  
կացութիւնը : Ինչ պիտի ծագի արդեօք այս

կորը պիլէ հինգ զուգուշ, և յետոյ շաբաթը  
տասը փարայ, տասը տարին ըմննալուն ինը զու-  
գուշ կուտայ ու հիւ ալ փարայ չի ըտէր, զանոնք  
կրնէմ : Իշտէ այս խաղա ճանքով տասը տարիէ  
ետեւ թոփ կու ըլլանք անտուկը կըմնանք որ եր-  
կու հարիւր էեթմիշ և հինգ հազար զուգուշ  
փիլաւի պէս գիլեւ փարայ կայ : Այստեղ ինչ  
կու ըլլայ, մէկս հազար զուգուշ, մէկս ալ հինգ  
հարիւր զուշ, և երրորդին ալ երկու հարիւր  
յիսուն զուգուշ բան մի չէ, գինովն մի մեղէ է  
ամեն, քիչ մի գիտեալք երկու հարիւր էեթմիշ  
և հինգ հազար զուգուշ եփ աղէկ փարայ միին է  
է ատիէ ինչ, ամեն մէկս առնենք նէ կինն ան  
ջուր : Չէ մենք այս ամեն մէկուն չպիտի տանք,  
հապա ան վախտը ձեր մէջն տասներկու մարդ  
պիտի գտնենք, մեծիս մի պիտի ընէմք : ան  
տասներկու մարդուն գիտութեամբ ձեր մէջն  
կամ ձեր տղոցը մէջն երեք հատ խեղք բանի  
հասնող, գիր խալմ գիտցող, տեղեւանլու մարդ  
տի զատենք : այս երկու հարիւր էեթմիշ և հինգ  
հազար զուգուշ անոնց պիտի յանձնեմք, ամեն  
մէկն ալ մէկ մէկ քաղաք պիտի դրեմք, անուն  
նին ալ «Լրամեան ինայրդական ընկերութիւն»  
պիտի գնենք : մենք ու այս տասներկու մարդս  
ալ ասոնց վրայ նաղըր պիտի ըլլանք, չորս ամի-  
սէ չորս ամիս, ամեն առաւնին տուածին պի-  
տի նայինք : չիտիտոր թողունք որ արշննալին  
առնեն անտեղեկին ծախսն, ամեն մէկ տարին  
ըմննալուն ալ հիտապը տի հանենք : Այս փա-  
րային քեարէն հարիւրին տասներկու զուգուշ  
եանի մէկինձինուդ հարիւր քսան զուգուշ, և

վրանգ օր օր կացութիւնն : Իւրաքանչիւրը ինքն  
իրեն կը հարցնէ : բայց ով կրնայ կամ ով կը  
հարմարձակի պատասխան մը տալ այս հարցմանը :

Վերիկայի Միացեալ Նահանգաց օրագրի մը  
մէջ յետագայ յօդուածը կը կարդամք :

ԲԱՌԻԹԵԱՆ ՎԱՍՅՈՒԹԻԻՆԸ  
Հրաշքի երեւոյթի

Հրատարակութիւնը բազմաթիւ փորձերու  
որ եղան Նիւ Կորք քաղաքը մարտի 18-ին  
ծարանաց վրայօր քիչ մը արտաքոյ կարգի պարտ-  
գայից մէջ, մօտեւ խորին աղեղցութիւն մը  
պատճառեց Վերիկայի հասարակութեան վրայ :

Այն Սարթէն անուանով մարդ մը, որ շատ  
տարինէրէ ի վեր իւր ստամոքսին վրայ բացուած  
վէրք մը ունէր, որուն մէջն կրնար մէկը տես-  
նել, իբրեւ պատուհան մը մարտի 18-ին  
րութիւնը, եւ թակալ եղաւ այս փորձերուն :  
Այս փորձերուն միջոցաւ տեսան թէ կերպիւրը  
կրնար ներս դրուիլ նոյն վէրքին ծակէն, և յա-  
րաբերական քործողութիւնը ստանալին ի վերայ  
զանազան տեսակ հիւանդութեանց՝ ճիշտ կեր-  
պիւ ապացուցուեցաւ : Վեն տեսակ միտերէն  
ոչխարինը ամենէն աղեկն էր մարտի 18-ին հա-  
մար, իսկ բուսական կերպիւրներէն բրինձը ա-  
մենէն շուտ կը հալէր : Վեն կարգի բժիշկներ  
ևս կարող եղան փորձելու նոյն միջոցներով, և  
ամեն վկայութիւնները բոլոր բժիշկներուն որ  
ներկայ գտնուեցան այս առթիւ մէջ՝ կողմնու-  
ցան թէ ամեն տեսակ զօրացուցիչ (գոնիք)  
զեղերէն որ նոյն վէրքին ծակէն ներս դրուե-  
ցան ստամոքսին ու մտաւ համար, և ոչ մէկը  
այնքան մեծ աղեղցութեամբ և մի օրինակ չգի-  
րայրներ և յառաջ շտանք փրկաւեալ գործո-  
ղութիւնը ստամոքսին բաց ի շրջու էլ զեղա-  
հատեցին : Այս փորձերէն կրտսնուի ուրեմն  
թէ այս գեղահատերը ստամոքսին խոռոչներուն  
մէջ գրուելով, երբ որ այս գործարանները մեծ  
սկստութեան և թուլութեան մէջ կը գտնուին,  
զօրաւոր և փրկաւեալ աղեղցութիւն մը ներ-  
գործեցին և ամեն ներքին աղեղցականութիւն  
և արտաքոյ կարգի զօրութիւն մը ստացան :

Այս գէղքը կը համաձայնի այն փորձին հետ  
զոր ըրին անոնք ամենքը որ գործածեցին Հիւ-  
ուէլի գեղահատերը Սպանիական Վերիկայի  
մէջ և Վասկոնայի մէջ, և հաստատուած է մեր  
գեղադործներուն և մեր աղքային հիւանդանո-  
ցաց պաշտօնական տուածներէն :

Վերիկութեան ամսոր, այնինչ այս ժամանակ

քինձինուդ վաթսուն զուգուշ, իւջիւնձինուդ  
եւսուն զուգուշ, տարաց տարի պիտի տանք :  
Նայեցէք մէկ մի, պիտի ձինք տարաց տարի  
միջեւ տասը տարի յիսուն երկու քանիս զուգուշ  
տուիք, հիմակ մինչև յաւիտեան տարվէ տարի  
հարիւր քսան զուգուշ պիտի առնէք : Երբնձի իդ  
տասը տարի քսան վեցական զուգուշ տուիք, հի-  
մակ մինչև յաւիտեան տարվէ տարի վաթսուուն  
զուգուշ պիտի առնէք : Իւջիւնձինիդ տասը տարի  
տարաց տարի տասնիւրեքական զուգուշ տուիք,  
հիմակ մինչև յաւիտեան տարվէ տարի եւսունա-  
կան զուգուշ տուիք, և կինէ փարանիդ ալ  
փարայ է : Հէմառաջ բաւականական, քսանա-  
կան տասնական փարայ տուիք, հիմակ հարիւր  
քսան, վաթսուուն, եւսուն զուգուշ պիտի առնէք :  
Ին տուածովիդ պոյտ մի ըրալի, քեզի մի թիւ  
թիւն, երկու ֆինձան խալմ կը նայեք, առնէք :  
ան ալ ըլլայ ալ նէ կըլլայ : չըլլայ ալ նէ կըլլայ :  
հիմակ 120 զուգուշ շուր տարուկ ապայ մի, 60  
զուգուշով ամբարիկէ կընթարի մի, ու ետուուն  
զուգուշ շուր կոկիկ փոստալ մի, տարի մի չէ նէ,  
վեց ամիս օրուն, նորուկ փոստիկ կը շաղկիւն :  
Իսկ հիմակ ասովալ չեղաւ, մենք ճաշեցին  
րուն պէս ըլլալու բան մի, սեպեղ մի կուղեմք :  
Այ քիչ մի տահայ սապը ընէմք, իշտէ այս փա-  
րայով մէկ մի երեք տղանիդ երեք քաղաք  
թիւճճար կու ըլլայ ու աղա կը խանգեն : ան ի-  
րեն ալ քանի մի քիչ որ ըլլայ տասներկու հատ  
թաքսիտար, սանտու խքեար, քեթթիպ, մախան,  
ճի պիտի գտնեն որ ասոնք աղաղային վար պա-  
րուն կը կանգնին : Իշտէ մէկ մի վեց հարիւր մարդ



ներս սատարի կոտորած կրնէ և հաղորտ որ Մ. Բարսեղիաներ կը յափշտակէ Հարաւային Միւլիկայէն, այս զօրաւոր դիպո աշխարհի յաջողութեամբ գործածուեցաւ, որ անոր գործը մեծ մեծ գովեստներ ընդունեցաւ, որ լրագրութիւնները և բժիշկները հազիւ թէ կրնային շնորհէլ: Իհրոհ, Շիւրի և Պրէզիդի բնակիչները հրաւիրեցին զԹոմաս Հոլմուէյ որ իւր բնակութիւնը հաստատէ Հարաւային Միւլիկայի մէջ և նուիրէ իւր մնացեալ կեանքը ի բժշկութիւն հիւանդութեանց, որոց յատկապէս ենթակայ են այս երկրները: Իսկ յիշեալ բժիշկը աւելի լայն արձակ դաշտ մը և աւելի ընդարձակ տեսարան մը ունի իւր առջև, ուր կրնայ իւր գիտութիւնը ի գործ դնել և տարածել իւր բարեգործութիւնները: Իւր մարդասիրութիւնը սահմանաւորեալ չէ լայնութեան և երկայնութեան աստիճաններէն, և ոչ միայն մէկ ազգի կամ մէկ կրօնի վրայ մասնաւորապէս կրտարածէ իւր խնամքը, այլ Հոլմուէյ բոլոր աշխարհի կրօնաբերքի: Իւր գործունէութիւնը նուիրեալ է ի տարածել բոլոր մարդկութեան մէջ իւր դեղերուն բարեբարութիւնը: Իւր դեղահատերը, որ ներքին հիւանդութիւնները բնաջնջ կրնեն, և իւր սպեղանին, որ նմանապէս արտաքին հիւանդութիւնները կատարելապէս կրճճէ, արգէն ընտանի եղած են մարդկային ցեղին մէկ մասին հետ և իւր միակ փառասիրութիւնը այն է, որ կարող ըլլայ հասցնել իւր դեղերը անոց, որ կը հեծեն Ֆիզիկական աստիճան սոսկալի ծանրութեանը ներքև:

ՓԼԻԻՕ.

Այս անունով հայերէն շաբաթական փոքրիկ լրագիր մը սկսաւ հրատարակել Պաղլոյ կայսերանիստ մայրաքաղաքը, խմբագրութեամբ յորդոյ տեաւն Ա. Սուրբատեանի: Այս ուսումնական երկտարարին անունը արդէն ծանօթ պիտի ըլլայ բարեւոյտ հասնողներէն, ըստ որում երբեք տարիի չափ կարգաց անոր Հայրենասէր անուն թերթը զոր կը հրատարակէր ի Գիկովիտ:

Մեր աչաց առջև ունիմք Փաղլոյ անուն լրագրոյն առաջին թիւը, որ կրկնապէս քաղաքական, առեւտրական և բնասիրական օգտակար լուրեր տալու իւր ընթերցողացը, հեռու կենալով միշտ կրօնական վեճերէ և գաղաղական բանականութիւններէ:

Գաղլոյ մայրաքաղաքին մէջ, այսպիսի պարկէշտ և ազգայնական նպատակաւ հրատարակուած հայերէն լրագիր մը քաջալերութեան և ազգասիրաց օգնութեանը արժանի կը համարուի: և

էն, տասնէ հինգ մարդը եղաւ թերթի Գլխիկ ներուստ պէտ որ ասոր շեփշէ չունիմք: Իսկ ամիս մէկը վերջ հարկուր մարդս տարը տարի պէրէլինք, մէջընտես տասնէ հինգը ազա, պարուն պիտի ըլլայ եղեր, մեղի ինչ, Ինչ ըսելէ քեզի ինչ, զուտ մէկ մի տարը տարի, տարին յիտուն երկու զուտ շտալով, մինչև յաւիտեան սինթէզը միւր մնաց անկէ տարվտարի հարկուր քան զուտ շտալով տանէ: Այս ջբաւէր, թող ջբաւէ, եանի այս տասնէ հինգ տըղայք որ մէկիդ աղան պիտի ըլլայ, Ինչ գիտես պէլքի դուն կամ քուկին որդիդ պիտի ըլլար, կուգես նէ ասով ալ իսկիւթ մի ըլլար, ես հինգ հարկուր սեքսէնը հիւրեկինդ ալ պոջ չիտիտոր թողում, հարցիլ թէ ինչ պիտի ընես:

Այս երկու հարկուր էլ թմրի և հինգ հազար զուտուջ տարին հարկուրին քան շահեալն յիտուն և հինգ հազար զուտու շտալին, հարկուրին տասնէրկուր որ է եոսուներեք հազար զուտու շտալին պիտոր բաժնուի, քանեկու հազար զուտու շտալու աւելնայ, այս քան երկու հազարէն 2 հազար զուտու շտալ տարվտարի աղքատաց պիտի բաժնուի, որ տնոք ալ մասնաւորին և Ստուած ալ հաճի ու իւր առատ ողորմութիւնը այս յիշերութեանը վրայ ցօղէ: Եւ ահա ըստ հազար զուտու շտալ կրնար հաստատու բարեկարգեալ գաղտնի բանալ տալ, իշտէ հինգ հարկուր սեքսէն և հինգիդ ալ տղան աղքիկ կամ խուսմը, այս գաղտնի մէջ ինտոր որ պէտք է կը թերթը անոք ալ ասով Գլխիկներու:

քաջայայտ էմք թէ այս օգնութիւնը ձեռք պիտի բերէ յիշեալ լրագիրը, եթէ իւր խոստումը գործքով կատարելու և յարատեւելու ըլլայ: որուն վրայ մեր կողմէն տարակոյտ չունիմք: Փաղլոյ լրագրոյն տարեկանը 18 ֆրանք է Թուրքաստանի համար, և անոր գործակալներն են, իղմիրի մէջ, յորդոյ պարոն Ստեփան Նշարտարտեան և ի. Պաղլոյ մէջ ի. Գաղաղ Սուրբատեան:

Այս լրագրոյն շարժողութեան ոճոյն ճաշակ մը տալու համար մէք ընթերցողացը, անոր մէկ յօդուածոյն վերջին կտորը այստեղ կը դնէմք, որուն մէջ «Պաղլո և տեղութեանց ժողովը» անուն տեղական վրայոք խորհրդածութիւն ընելով, կըսէ:

«Չգիտեմք թէ ինչ ընդունելութիւն պիտի գտնայ այս նոր ու ամենագոյն ինդիքը Փաղլոյ գետնանաժողովին մէջ: բայց (ինչպէս որ անորն ալ վիայէ) Հոլմուէյ գաւառներուն արդի քաղաքական կացութեամբ ալ անհնար երեւի մեզ անդորրութիւն յուսալ, փաստիկ պատկան կառավարութիւնն այնչափ ծանր ու զգուշիկ է, զած է Իտալացոյ, որ կարելի չէ յուսալ թէ կարոնալաց և այլ եպիսկոպոսաց ըրած խտուտութիւնը Իտալացոյ օրտէն փարատի:

«Չգիտեմք մանաւանդ թէ Պաղլոյ երկիրներուն ոյք պիտի տիրեն, կամ թէ Իտալոյ ժողովրդեան իրաւանցը պիտի զիջան մեծ բազմութիւն մի, որ տմեն կերպիւ պատկանութե պաշտպան կեցած է, և կամ Փարիզի գետնանաժողովին ընելիք վճիռն այս տեղին ու Իտալոյ ժողովրդեան փափաքին համեմատ պիտի լինի:

«Բանի որ այս տեղը մեծ ազգեցութիւն ունի բոլոր Եւրոպայի տեղութեանց վրայ, հաւանական է որ Պաղլո ալ ակամայ տոկոսի գոհ լինել միայն իր հոգեւոր իշխանութեան, և այն ատեն Զուտու և Հայոց կաթողիկոսներէն այն տարեկրութիւնը միայն պիտի ունենայ որ ինք իր նոտած քաղաքին ալ իշխանը պիտի լինի:

Ընայժմ Ինիլիէի և այլ պապական թերթերուն մէջ բոլոր և սպառնալիք այս տեղին գըլխուն տեղալ սկսան: Ընդանի Կաթողիկոսը անոր մի հրատարակէք «Համակ առ ոմն քաթոլիկ անուն», ուր անաթէմայք և սպառնալիք մը ման պէս վիտան: . . . : Մենք մասնաւոր հաւում չունիմք Պաղլոյ իշխանութեանց վրայ, փաստիկ նա՞ մէջ հոգեւորով և ոչ մարմնաւորով մեզի բարոյ թիւն կարող է ընել, բայց ինքն օտար և հեռաբնակ Վրդ՝ այս խորհրդիկ տարաւ մը տեսնելը հետաքրքրութիւնն ունիմք: Իսկ ներքին համոզմամբ առաւել փափաքեմք զիտալացիս ազատ տեսանելքան զՊաղլո թագաւոր:

պէս կու ըլլան: Գլխիկ կենմ այս ըսածս բիշ մի խելքերինդ տեղ ըրաւ, անձաք գիտեմ տահայ շատ հարցնելիք բաներ ունիք, ես ալ ամենուրեք ձեզմալ տալու ձեպս շատ մը նոխուտ ունիմ:

Գիտեմ ամենեքդ ալ կըսէք քի, գաղաղտունը՝ կարգաւոր բան տրվիլ, նէ փորձածի Սայու Փիլոն կանէն ու մեր պարտքէն վար կըլնայ, նէ ալ էքմէքմէ կանէն ու հաց կուտայ: Գլխի, գլխի, գլխի, տահայ խորամ մի, իրաւ այս խոսքը ըստաւրեալ հոգի տեսէս ալ կու ըսէր, տղաս նէ վարդապետ տի ըլլայ, նէ տերտէր: նէ վարժապետ, իմ աղաք թիւծար տի ըլլայ, թիւծար: Հաղաւոր թիւծարը տահայ աւելի գիտուն ըլլալու է, ատ ալ հերիք է, ծիծաղելի խելաց աղ քաղութիւն, քէննուտ ասոնք ոչնչ բան մի են որ իճատ ըրեր են, վախ վախ, կաղաչեմ ու շողրութիւննիդ թոփէք սա խոսքիս:

Ըր մի ամեն ինչ միտիւ ամառուան շատ տաք տունը ձանդորդութիւն ըրի, կէս առուր քաջա չորուն կոյնութէն նստած ըրմի ալ չար թած թիւթիւն քոյի գրած, վրայ ջրալիս կըլնէի ու կըպարպէի, գիտնալով թէ ջրալիս խոզմարդը մէկ մի քնացած մէկ մի ալ հաց կերած ատենը չէ, ուրիշ ատեն միշտ ձեռքէն ձգելու չէ: վրաս գըլխս թէմզ, ստ ալ օրոտը ձող մարդ է ըստելու մէկն էի: Եւ արալք, եռէլքս բիշ մի հեռուի ամիտի մի վրայ՝ վրան գըլխը հին պատուտած, մարմնոյն բոլոր երեւցած տեղերը սեքսիւր թողելով ներկուած հաստանդամ մէկը նստեր էր: Հաւատու էթէ

— Ետալիայէն կը գրեն:

«Բաղլոյի Անգղոյ հիւպատոսի փոխանորդ միտոր Գ. Կատալեթիա չիւնալով ինքզինքը արդարացնել և հերքել բաղմութիւն ծանր ամբաստանութիւնները որ ապացուեցան իրեն գէմ իւր պաշտօնէն զրկուեցաւ և անոր յաջորդեց միտոր Ալֆրէտ Սանտիսը, որ Պրուսայի Անգղոյ հիւպատոսին որդին է: Այս անորեւնութիւնը կոտանդնաւորոյ Անգղոյ գետնանին հրամանաւը եղաւ, և իղմիրի Անգղոյ հիւպատոս միտոր Պրէսթիս յանձնուեցաւ որ Ետալիա գալով ի գործ դնէ յիշեալ տնօրէնութիւնը: Զարգոյ միտոր Պրէսթի հիւպատոսը, այլև միտոր Պրոսի և միտոր Սալուֆ՝ որ չորս ամիսէ ի վեր այստեղ կը գտնուէին միտոր Կատալեթիային ընթացքը քննելու համար, անցեալ ամսոյ 30ին ըստ նոր տումարի, մեկնեցան իղմիր երթալու անգղիական պատերազմական շտեկանով մը: Զիշեալ երկու քննիչ պաշտօնատարները այս փափուկ և դժուար պարագայից մէջ, մեծ խոհ հեմութեամբ վարուեցան արգիլելու համար ալ մեն տեսնի ցաւալի տեսարանները, որ կրնային տեղի ունենալ, վասնզի միտոր Կատալեթիային Ետալիա բնակիլը սկսեր էր վտանգաւոր ըլլալ:

«Այս անձը Ետալիայի է և հումեական կրօնին կը հետեւէ: Իւր հայրենի գաւառութիւնը ուրաջաւ բողբոջանութիւնը ընդունելու համար: և երկու տարիէ որ Անգղոյ հիւպատոսի փոխանորդի պաշտօնը կը վարէր Ետալիայի մէջ:

«Եթէ իր իշխանի կառավարութիւնը, ինչպէս ամեն ժամանակ, այս պարագայիս մէջ ևս իւր արգաւանդը զգացմանը և իւր անաչառութեանը յայտնի ապացոյց մը տուաւ, դատաւ պաշտելով իւր պաշտօնատարը որ յանցաւոր էր և իրաւունք տալով անոր դատախաչներուն, որոնք օսմանեան հպատակ են:

— Մեր ընթերցողոյ ուշադրութիւնը կը հրաւիրեմք հետեւեալ պաշտօնական տեղեկութեւ վրայ, զոր կը խորհարք յորդոյն Գլխիկ օրտգրոյն 292 թուոյն մէջ:

«Եթէ իր իշխանի քաղաքական միջոցաւ հրատարակեալ տեղեկագրութեան մը, որ գրեթէ պաշտօնական կերպիւ կը ծանուցանէ Անգղոյ մէջ եղած երկաթէ ծանապարհաց ցուցակը, յայտնի կըլլայ թէ անոց շինութեանը համար, 1832էն մինչև ցայսօր 9817 միլիոն 69000 ֆրանք ծախք կըրէ: Առանձնաշնորհութիւն ունեցող քանի մը երկաթուղիներ տարին հարմարին 5-5½ շահ կուտան իրենց բաժանորդացը բայց միւսները որոց մէջ մեծ ու երեւելի երկաթուղիներ ալ կան, տարին հարուրին 2-1 և

երազս գայ կը վախճամ, մէկ ձեռքը ճակատին դրած մէկալ ձեռքն ալ իրմէն աղտոտ տեսնէ մի թուղթ բռնած կը կարգար, հիմակ կը հասկընամ որ զարեթայ է եղեր, չիւնի ան տեսնը մեր աղքը գժբաղքութեամբ զուրկ ըլլալուն աշունը պիլէ չէի գիտէր, հոգ չորս ու առջևս եղած փնէքերէյն նայեցոյ որ վարը օծախին գէմալ անոր պէս մէկ մի կայնէր միշտ քեծմուր կընեալէր կարկին, ու բոլորին ալ ջուրի պէս կը վաղէր մարմինն: Իսկէն ինծի գոռողով թիւն մի եկաւ, ու ինքիւնն ըսի, փառք քեզ Ստուած որ զիս ասոր պէս էլէի չես տեսնէր: սա ինչ մարդկութիւն է: Իհու տար վրայ կը զարմանայի մէկ մի ալ վարէն չանիկ ձայն մի եկաւ, ու ան աթուին վրայի մարդը պիտեն մի ձեռքի թղթերը աթուին վրայ գրաւ ու վար լծաւ, վարին ալ ձեռքին քիւրէկը անոր տուաւ ու վեր եկաւ, անոր տեղը նստաւ պաշտպան կարգալ: Այս զարմանալով մի մարդուն վրան նայելիքն, մարդը դէպի իս նայելով «Իսիճաք չօք թրքոլ» ըսաց: Իմացոյ որ քիւրի տաճիկերէն գիլտէ, հարցալ թէ ատ ինչէ որ կը խորհարաս, — ասիկա ինկիլիզէ Հոսմարան Պիտանի Վիտեթաց է ըսաւ, այսինքն մարդուն համար շատ պէտքը եղեալ գիտութիւններուն անպարն է, խնտայի ու հիմակ հիմա քեզի պիտանի եղածը, ան դժոխքն որ վեր եկար, ձեռքիդ երեսներդ լուանալ ու սերննալ, անկէ ետքը չըպուիս խմէլէ ըսի, զիւր հիմակ նայեթ թե զի կուգայ կինէ, վար տի ինչաս: Պիտ շարունակուի:



Երբեմն հարուրին կէս շա՛հ կըբերեն : Լ'մեն երկաթուղեաց եկամուտը իրարու վրայ հաշուելով 1853ին շահը հարուրին 3 1/2 էն աւելի չե՛ղաւ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒԹՅՈՒՆ , 6 ՅՈՒՆԻԱՐԻ

Սոյաբարձութիւն մէջ թուրքապաշտի իրամանոյ անուամբ հաստատուելու նոր դրամանոցին գործըբերը յաջողութեամբ յառաջ կերթան 'ի Լոնտոն : (Հայտնի է որ այս իրամանոցին հիմնադրուած դրամագլուխը մէկ միլիոն լիւա սթէրլին պիտի ըլլար : Բայց Լոնտոնի վաճառականաց ակթիանոյին մէջ անոր ստորագրութեան ցուցակը բացուելուն , մէկ շաբաթուան մէջ յիշեալ գումարոյն կրկնապատկիլը , այսինքն երկու միլիոն լիւա սթէրլին ժողովուեցաւ : Այս յաջող վաճառքը յայտնի ապացոյց մըն է Եւրոպայի վստահութեանը՝ զոր ունի թուրքապաշտանի վրայ :

Թուրքապաշտանի իրամանոցին գլխաւոր պայմաններէն մէկն ալ այս է . այսինքն բոլոր թրք-թողրամները չըջաբերու թենէ ժողովուեցէն երեք ամիս ետքը պիտի սկսին անոր գործողութիւնները :

Այս կարեւոր գործոյն վրայօք , Բարձրագոյն Իսկուռ հետեւեալ ազդարարութիւնը հրատարակեց Պաշտօնական ազդարար-ի-ն

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՐԱՆ

«Այսերական կառավարութիւնը ամեն հարկաւոր միջոցները 'ի գործ դրաւ , ժողովելու համար 'ի մօտ աւուրս զգրամաթղթերը որ տուկան 'ըջաբերութեան մէջ կըգտնուին : Պաշտօնական յայտարարութեամբ մը , ղկնի քանի մի աւուրց' պիտի ծանուցուի հասարակութեան զժամանակը , յորում այս փրկաւետ որոշմը կատարելուպէս 'ի գործ պիտի դրուի' :

Այսերական հրովարտակաւ , Վիւրթուտանի կուսակալութիւնը Լիւ-Բիթա փաշային յանձնուեցաւ , որ Խարբերդի նախորդ ընդհանուր կառավարին էր :

Այս մասիպլ մօտիւ թուրքներէ , որ 'ինչպէս յայտնի է , Վաղըյ դեսպան էր 'ի Կ. Պօլսի և Եւրպէն կայսեր հրամանագրովք արտաքին գործոց տեսուչ անուանեցաւ , անցեալ ամսոյ 30ին գաղղիական Նիթաք անուն շոգենաւով մեկնեցաւ Սարսիլիա և անկէջ Փարիզ երթալու :

Երբին Վ. սեմաթիւնը 'իւր մեկնէլէն յառաջ Տըմա-Պաքէի կայսերական պալատը երթալով՝ պատիւ սննեցաւ վեհափառ կայսեր ներկայանալու . որ մեծ մարդասիրութեամբ ընդունեցաւ Վաղըյ արտաքին գործոց տեսուչը :

Այսինքն Բրիտանիոյ դեսպան վեհափաշտը Էլ Էնրի Լալըն Պիւլիէր , անցեալ ամսոյ 27ին կիրակի օրը Տըմա-Պաքէի կայսերական պալատը գնաց . ուր պատիւ սննեցաւ օգոստափառ Սուլթանին ներկայանալու և խորհրդակցելու Երբին Վ. Եհափառութեանը հետ :

Հիշեալ վեհափաշտը դեսպանը ամսոյս 27ին շաբաթ երեկոյն մեծ հացկերոյթ մը ըրաւ , որ ներկայ էին Վատրիոյ դեսպանը , բարձրապատիւ Վալի փաշան , վեհափաշտ Սուլտա փաշան և ուրիշ երեք շատ պաշտօնատարք :

Այս մասիպլ Տէվրիշ փաշան , որ 'ինչպէս յայտնի է , մօտերս դեսպան անուանեցաւ 'ի Բեդրպուրի , ամսոյս 27ին աւստրիական Լոյսի շոգենաւով մեկնեցաւ , ընկերութեամբ իւր պաշտօնատարոյ , թրքեստ երթալու . ուսկից Վ. Էննայի ճանապարհաւ Բեդրպուրի իւր պաշտօնը վարելու պիտի երթայ :

Ի ԶԱՆԱԶԱՆ ԵՆԻՐԻՐ

Չփուռիս , 8 Յունվարի :

Բոտ գրաւոր հրաւիրանաց մեր ընդհանուր կառավարիչ վեհափաշտը Սոհամմեր փաշային , քաղաքիս յարգոյ հիւպատոսները անցեալ շաբաթ 'ի ժողով գումարուեցան տեղական կառավարութեան պալատը , ուր խորհուրդ եղաւ 'ի մասին հարկաց , որ պիտի առնուի եւրոպացի տէրութեանց հպատակ արհեստաւորներէն և տեղական մանրամասն առևտուր ընող օտարականներէն :

Ինչպէս մեր նախընթաց թուոյն մէջ ծանուցինք , քաղաքիս Ենգընոյ հիւպատոս մեծարդոյ

Սիւստր Պիլոն (Թ. Ստուլիայի մէջ ունեցած իւր պաշտօնը կառարելէ ետեւ , վերադարձաւ Իզմիր , ընկերու թը միստր Պրոսթին և միստր Սալի Ֆին :

Այս վերջին յարգոյ անձը , որ շատ ժամանակ չէ քաղաքիս Ենգընոյ հիւպատոսարանին առաջին թարգման կարգուած է , սիսաւ իւր կարեւոր պաշտօնը խիստ արժանաւորութեւ 'ի գործ գնեւ :

Պրոսթային կըգրեն մեզ :

«Հայտնի է որ քաղաքիս բուն առաջնորդը՝ Կ. Պօլսոյ ամենապատիւ սրբազան Վեորդ պատրիարքն է , որ իւր կողմանէ փոխանորդ առաջնորդ յուղարկեց մեզ մօտերս զգրապատիւ Սարգիս արքեպիսկոպոսը , որուն հայրական իրենամբէն գոհ է մեր ժողովուրդը , ըստորում ուսումնասիրական հաստատութեանց վրայօք հոգ կըտանի , և մանաւանդ սուրբ Պողոսեան վարժարանին յառաջադիմութիւնը և անոր անօրէն և պաշտպան Բեկերութեան զարգացումը իւր բարենախանձ ջանքը եղածակայ եղած են : Սրբի է մեզ յուսալ թէ Կոստին Սրբազնութեան այս ազգասիրական խնամքը անպտուղ չեն մնար' :

Այլեւմէ թէ Պանտրմոյի Հայոց խառնութիւնը վերջապէս դադարեւ է , և հաշտութիւնը կըտիրէ եղեր անոնց մէջ : Ստուած տարոր այս հաշտութիւնը և սերը երկարատեւ ըլլար և յիշեալ քաղաքին խեղճ Հայ ժողովուրդը ժամանակ մը ազատ մնար յերեւելի կամ յաներևոյ փորձուեց :

Այլեւմէ գարձեալ թէ Կոստանդնուպօլսոյ ազգային գերագոյն ժողովոյն անգամայն ընտրութեանը և անոր կառավարութիւնը վերաբերեալ օրէնքներ հաստատուելու կաշխատին 'ի պատրիարքարան , ուր ժամանակ ժամանակ կըգումարուին եղեր մայրաքաղաքին Հայ երեւելիները , ահա հիւստաւորաց լիաւորները և ուսումնականները : Այս օրէնքները կարծեմք թէ տեսակ մը սահմանադրութիւն (քօստիթիւսիօն) , այսինքն դաշնադրութիւն մի պիտի ըլլայ 'ի մէջ ժողովուրդեան և ազգային գերագոյն ժողովոյն , որ յիշեալ սահմանագրութեանը համեմատ պիտի կառավարէ թուրքապաշտանի մէջ գտնուող Հայ ժողովուրդը , երբ որ ազգային գործոց վերաբերեալ խընդիր մը կամ վեճ մը կըծագի :

Յուսամք թէ յետ այսօրիկ աւելի մանրամասն տեղեկութիւններ պիտի ունենամք այս գծուոր գործոյն վրայօք . որուն առայժմ ազգասիրաբար յաջողութիւն կըբարիմաղթեմք 'ի բոլոր սրտէ :

Կոստանդնուպօլսէն կըգրեն թէ Ֆիլիպիի Յունաց եկեղեցւոյն մէջ սուրբ Օննդեան օրը տասօրիկ կուի պատահել է 'ի մէջ Պօլսոյ քաղաքի և Յունաց 'ի պատճառս ժամատացութեւ ընդօրին , զոր Պօլսոյները երեց ընդունով կուգին : Կը հաստատեն թէ այս դժբաղդ կուոյն մէջ 14-15 հոգի սպանուել են :

Այս Մէքտընէր Սթէֆընսը , որ Այոթնի երկաթուղւոյն ընկերութեան կառավարութեան ժողովոյն նախագահն է 'ի Լոնտոն , այս շաբաթու հասաւ Իզմիր :

Բանի մը տարի կայ որ Իզմիրի մէջ օսմանեան հիւանդանոց մը հաստատուած է , ուր ձրիաբար կընդունուին ամեն ազգի և ամեն կրօնի վերաբերեալ հիւանդները : Սոս օրերս քաղաքիս անգղիացի բնակիչները մեջերսին ստորագրութիւն մը բանալով օտակ ժողովցին և նուրբեցին յիշեալ հիւանդանոցին , խոստանալով միանոյն գումարը ամեն տարի մատուցանել 'ի նպատակ այս մարդասիրական հաստատութեանը :

ԱՄԵՐԻՍՔԱՆ ԵՆԻՐ

Չփուռիս , 8 Յունվարի :

Այս շաբաթու 10 կողով աֆիոն վաճառեցաւ 176-177 ղէշի և 50 կողով 177 1/2 ղէշի : Առայժմ քաղաքիս մէջ 350 կողով անվաճառ աֆիոն կայ , Տորոն քիչ մը թուլէ , և այս շաբաթու 96 քուրձ Պախրի լաւ ապրանք ծախուեցաւ 275-278 ղէշի , Ենգընոյ փալատի տնիքին՝ 76-80 ղուռուշէ :

ԾԱՆՈԹԱՆԻՍ

Սոսիայ Լաւնոյն 1860 ամին առաջին թիւը այսօր հասաւ մեր ձեռքը Իրիմու թեոգոսիա քաղաքէն , ուստի ո՛վ որ կըփափաքի բաժանորդ գրուիլ այս պատուական ամսատետրին , կրնայ

յայտնել իւր կամքը՝ Լաւնոյն գրատուել , և ստանալ անկէջ առաջին թիւը և հետզհետէ գտնու թիւերը :

Բեկերադրութեան տարեկան գինն է , կանխիկ հատուցանելի , լոկ հայերէն մասին համար 6 քարպովանց , լոկ ուսներէն և գաղղիարէն մասին համար 4 քարպովանց , և հայերէն ու գաղղիարէն մասին համար 8 քարպովանց : Ուստի միայն մէկ տետրալը առնողը 1 քարպովանց պիտի վճարէ :

ԿԱՐ ԱՌԱՋՆՈՐԴ ԽՕՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Կամ սովորական և ընտանեկան տրամախօսութիւնը չորս լեզուով , այսինքն գաղղիարէն , յունարէն , անգղիարէն և թուրքերէն , 'ի պէտք ուսանողաց և ճանապարհորդաց :

Հարարէայ

ՄՕՆՍԻՒՆ . ՄԱԼՈՒՖ

Հեղինակ զանազան սկզբնական օգտակար աշխատասիրութեանց , առաջին թարգման Ենգընոյ հիւպատոսարանին Օլիւսիոյ , անգամ Փարիզի Սիւական ընկերութեան , անգամ Սեմին Բրիտանիոյ և Իսլանտի Բրիտանի արքունի ընկերութեան , նշանակիր կայսերական Սեմինի կարգին , և այլն , և այլն , և այլն :

Տպէւ 'ի Փարիզ , 1859 :

Լաւնորդ կըհամարեմք այս գործոյն օգտակարութիւնը երկարօրէն բացատրել այստեղ . վասն զի ամենուրեք յայտնի է թէ յիշեալ ընդունելը կամանոցմէ մէկը սովորող ուսումնասիրաց համար , նմանապէս ճանապարհորդաց համար , անմահարկաւոր և խիստ օգտակար գիրք մըն է : Իտնական հեղինակը երեւելի հանդիսացած է իւր այսօրիկական և ուրիշ ասոր նման բազմաթիւ աշխատասիրութիւններովը . որոց ամենքն ալ սիրով և յօժարամտութեամբ ընդունուեցան թէ Լոնոյ և թէ Եւրոպիոյ ուսումնասիր հասարակութիւններէն , ուստի տարակոյս չունիմք թէ առաջիկայ գիրքն ալ միանոյն սիրալիք ընդունելութիւնը պիտի գտնէ :

Կըծախուի գրքավաճառ Ս. Բասթըլանին խանութը , որ 'ի Սինանդուխտան թիւ 30 , և քիւր Սաղիսին խանութը , որ Յունաց Լիւսիֆոթիին է կեղեցւոյն քոջն է ,

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՏԱՐԵԳՐԻՐԸ

Վ. Ժան 1860 ամին :

Որ կըպարունակէ Գրիգորեան տոմարը , Հայոց , Յունաց , Հրէից և Թուրքաց օրացոյցը , և զանազան յօդուածներ , գրեալ անգղիարէն , յունարէն և թուրքերէն լեզուաւ : Այս գրքոյն աղբիւր մըն է հանապազօրեայ օգտակար տեղեկութեանց , որուն մէջ գրուած է նաեւ յատուկագիծը Այոթնի երկաթուղւոյն :

Լիւսապիտանի

ՄԻՍՏՐ Ս . ՌԻՉԵԼՏ ՇԵՓԵՐՏԻՆ

Եւրոպիա Կառավարին Իշխի անգլիական Կոլլեջն : Կըգտնուի Կոստանդնուպօլսոյ Ֆ. Հ. Շիմքի և ընկերաց քով , 'ի Պէյօղլու : Թէնք՝ Չարլս Վ. Ուիլյէրիին քով , Վ. Էնեթիկի և Թրեստի (Թիթի) Վ. Ուիլյէրիին քով , և Լոնտոնի Ս. Սատտէն պարոնին քով , որ 'ի Ֆէտընհէլ փողոցը , թիւ 8 : Իրեն՝ 3 շաբէն է :

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Այս լրագիրը երկու շաբաթ անգամ մը կըհրատարակուի : Տարեկան գինը 120 ղուռուշէ կանխիկ վճարելի . ո՛վ որ կուզէ կրնայ բաժանորդ գրուիլ , Չփուռիս՝ Արշալուսոյ Արարտեան գրատունը . իսկ ուրիշ քաղաքաց համար՝ ահա կընշանակեմք լրագրոյս յարգի գործակալաց անունովը , որ են .  
Կոստանդնուպօլսոյ՝ տէր Յաւուրթի Ս . Քուրթնաօֆ .  
Երուսաղէմէն է Եւրոպիայ խանը երարդ գտնիկը .  
Ալեքսանդրիա՝ տէր Սատթիս քահանայ .  
Հալեպ՝ տէր Յովհաննէս Ս . Քուրթնաօֆ .  
Եւրպէ՝ տէր Սիմոն , եղբայր հանգուցեալ տեսուն Յակոբայ Ս . Սուրտեան .  
Վենիս՝ տէր Յակոբոս Արշակ .  
Կարին՝ մոհտեան տէր Երուսթիւն Ղազարեանց .  
Դաւրէթ՝ տէր Թովմաս Շէրալեանց .  
Պալատոս՝ Անգղոյ առաջին թարգման տէր Սիմէյէ Սիմէյէան .  
Կալիպօլիս՝ տէր Թադէոս Խ . Աւետուհեան .  
Սոքատոս՝ տէր Սէթ Աւետ Սէթեան :

Խմբագիր տէր Լուսիոյս .

Վ. Ժան Ս . Պալապալեան :

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՒԱՆՈՒՍՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ